ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011թ. նոյեմբերի 11 թիվ 146 - Ա

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հարապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի ''Մի շարք բաժնետիրական ընկերություններ լուծարելու մասին'' թիվ 891-Ա որոշման 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2011 թվականի հուլիսի 26-ի թիվ 01/14.23/2425-11 գրությունը՝ *կարգադրում եմ.*

1.''Թալինի գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորում'' պետական փակ բաժնետիրական ընկերությունում գույքագրում իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ եռօրյա ժամկետում իրականացնել գույքագրում և գույքն ու համապատասխան փաստաթղթերը հանձնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2011թ. հուլիսի 21-ի թիվ 63-Ա հրամանով ստեղծված լուծարման հանձնաժողովի անդամ Լ.Մնացականյանին:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ԱՎԱԳՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի

մարզպետի 2011թ. նոյեմբերի 11-ի

թիվ 146-Ա կարգադրության

Կ Ա Զ Մ

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Յու.Ազատյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, հանձնաժողովի նախագահ

Յու.Ժամհարյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

Է.Մկրտչյան - ՀՀ Արագածոտնի մարզի ''Թալինի գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորում'' պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

Մ.Գրիգորյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ